ՎԱԼԵՐԻ ՄԻՐԶՈՅԱՆ
ՀՊՏՀ կառավարման ամբիոնի պրոֆեսոր,
փիլիսոփայական գիտությունների դոկտոր

ՀՈՌԵՏՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Հոդվածում քննարկվում է հռետորական արվեստի բուհական դասավանդման մի քանի հարց: Վերլուծության հիմքն են հռետորական արվեստի (ճարտասանության) տեսական ըմբռնումները, այս գիտաճյուղի պատմությանը, հիմնախնդիրներին և դասավանդման յուրահատկությանը վերաբերող դասական և ժամանակակից աշխատությունները, դասագրքերը, ուսումնական ծեռնարկները և մեթոդական ցուցումները, հեղինակի բազմամյա փորձը և ՀՊՏՀ ուսանողների շրջանում անցկացված հարցումները: Եզրակացություններն ուղղված են ոչ միայն տնտեսագետ կառավարիչների ընդհանուր մասնագիտական պատրաստվածության բարելավմանը, մասնավորապես՝ հաղորդակցական հմտությունների կատարելագործմանը, այլև առհասարակ ապագա շրջանավարտների հանրային լայն գործունեության շնորհիվ հրապարակային խոսքի վարկի բարձրացմանը:

Հիմնաբառեր. *հռետորական արվեստ, դասավանդում, հրապարակային խոսք, հաղորդակցական հմտություններ, սոցիոլոգիական հարցում*
JEL: Y8, Z1, Z10

Հռետորական արվեստի (ճարտասանության) կարևորությունը առանձնակի հիմնավորման կարիք չի զգում ոչ միայն բարձրագույն կրթությամբ անհատի, այլև հանրության ամեն մի հասուն անդամի համար: Խոսքային հաղորդակցումը միշտ եղել է մշակույթի կարևորագույն մասը, մարդկանց համակեցության բուն հնարավորության գլխավոր պայմանը: Քաղաքակրթության հնագույն հուշարձանները վկայում են «ոսկեբերան» անձանց, հմայիչ, առինքնող խոսքի տեր մարդկանց մասին: **«Խոսքը՝ մեկ, աստված՝ մեկ»** ասացվածքը լավագույնս բնութագրում է հայոց մտածելակերպի խորքային վերաբերմունքը խոսքի գործածությանը:

Ճարտասանության (հռետորական արվեստի) էության, նպատակների և խնդիրների տարբեր ըմբռնումներ կան: Առավել ստույգը և հակիրճը հայ մեծ փիլիսոփա **Դավիթ Անհաղթինն** է՝ «Ճարտասանությունը համոզելու արվեստ է»[1]: Որպես ինքնուրույն գիտություն՝ մարդկանց քաղաքակիրթ համակեցության էական տարր ճարտասանությունը ձևավորվել է մ.թ.ա. հինգերորդ դարում, երբ հասունացավ նման գիտության հանրային անհրաժեշտությունը, ստեղծվեցին համապատասխան պայմաններ՝ ամենից առաջ Հին Աթենքի կառավարմանը բնորոշ անմիջական ժողովրդավարությունը:

Հետագայում նույնպես ճարտասանությունը վերելք ապրեց ժողովրդավարության ծաղկման օրոք և խամրեց ժողովրդավարության սահմանափակման հետևանքով: Ինքնին հասկանալի է, որ հրապարակային խոսքի հանրային գործառության բուն հնարավորությունը, առավել ևս զարգացումը ենթադրում են քաղաքացիական ազատությունների իրական ապահովում: Պատահական չէ, որ Խորհրդային Միությունում գորբաչովյան «վերակառուցման» հռչակմամբ յուրատեսակ վերածնունդ ապրեց ճարտասանությունը, լույս տեսան մենագրություններ, դասագրքեր, թարգմանություններ, առարկան աստիճանաբար սկսեց մուտք գործել կրթահամակարգ[2]:

Ճարտասանական հմտությունների կարևորությունը բացառիկ է արդի «տեղեկատվական» հասարակության պայմաններում: Ամենից առաջ՝ խոսքային հաղորդակցման տարատեսակ վիճակներում ժամանակակից մարդուց պահանջվում է որակապես նոր բնույթի հաղորդունակություն: Հանրության մեջ լիարժեք գործելու համար, ավելի քան երբևէ, ամեն ոք պետք է ունակ լինի արագորեն յուրացնելու տեղեկատվության հարաճուն հոսքը, զտելու իրեն անհրաժեշտ տեղեկությունները, ստույգ ըմբռնելու ստացած հաղորդագրության իմաստը, հնարավորինս սեղմ ժամկետում ձեռնարկելու համապատասխան գործողություն՝ խոսքային արձագանք, առարկայական քայլ, վերաբերմունքի փոփոխություն, դիրքորոշման ճշգրտում և այլն: Ժամանակակից մարդու համար նույնքան հրամայական են դարձել ամեն տեսակի զրուցակցի հետ երկխոսություն կառուցելու և վարելու, սեփական միտքը հավաստի խոսքային ձևի վերածելու և ըստ հասցեատիրոջ ընկալման առանձնահատկությունների առավելագույնս համարժեք հաղորդելու, տրամաբանական և հուզարտահայտչական փաստարկման արդյունավետ եղանակներ գործածելու հմտությունները: Զուր չէ արձանագրում ամերիկացի տեսաբան Սեմ Լիթը **«Ճարտասանությունը Արիստոտելից մինչև Օբամա»** գրքում. «Մեր առևտուրը, մեր քաղաքականությունը, մեր մշակութային և սոցիալական կյանքը ամբողջովին ճարտասանական են.... Քաղաքագետները սիրում են մեզ ասել, թե մենք ապրում ենք «գիտելիքի տնտեսության» մեջ, բայց նույն հաջողությամբ կարող էին անվանել «ճարտասանական տնտեսություն»: Մեր

---

[1] **Դ. Անհաղթ,** Փիլիսոփայության սահմանումները // Անհաղթ Դ., Երկիր, Եր., «Սովետ. գրող», 1980, էջ 61:

[2] Տե՛ս **Клюев Е.В**., Риторика. Учебное пособие для вузов. М., “ПРИОР”, 2001, **Лиммерман Х.**, Учебник риторики / Пер. с немец., М., “Интерэксперт”, 1998, **Введенская Л.А., Павлова Л.Г.**, Культура и искусство речи. Ростов-на-Дону, “Феникс”, 1998, Культура русской речи. Учебник для вузов. М., “НОРМА–ИНФРА–М”, 1998, **Сопер П.**, Основы искусства речи / Пер. с англ., Ростов-на-Дону, “Феникс”, 1996, **Зарецкая Е.Н.**, Риторика: Теория и практика речевой коммуникации. М., “Дело”, 1998, **Рожденственский Ю.В.**, Теория риторики. М., “Добросвет”, 1997, Риторика и культура речи в современном обществе и образовании. Сборник материалов X международной конференции по риторике. М., “Наука”, 2006, **Аннушкин В.И.**, Риторика. Вводный курс, учебное пособие. М., “Наука”, 2007:

օրերում ճարտասանության գրքերը պետք է որոնել գրախանութների՝ գործարարությանը հատկացված բաժիններում, գրքեր, որ խոստանում են սովորեցնել, թե ինչպես դառնալ հաջողակ՝ կառավարելով համապատասխան մարդկանց հմտությունները, ինչպես ձևավորել ընկերության ոգին, ինչպես տեղ հասցնել սեփական ասելիքը»[3]:

Պատահական չէ, ուրեմն, որ ամերիկացի ամենանշանավոր կառավարիչներից մեկը՝ **Լի Յակոկան,** «Կառավարչի կարիերան» հույժ ուսանելի ինքնակենսագրական գրքում, խորհելով սեփական հաջողությունների մասին, բացառիկ տեղ է հատկացնում ճարտասանական հմտություններին: Նախապես, հիշում է նա, թեպետ դպրոցում մասնակցել էր բանավիճային ակումբի աշխատանքին, սակայն վարանում էր հանդես գալ հրապարակային ելույթով: Եվ ահա «Ֆորդ» ընկերությունը ծրագիր է ձեռնարկում՝ կառավարիչներին ուսուցանելու ճարտասանական արվեստի հնարքներ: Դասընթացի շնորհիվ Յակոկան ոչ միայն դառնում է հմուտ ճարտասան, համոզիչ խոսքի մեծավարպետ, այլև հարկ է համարում ընկերության բազում աշխատակիցների ուղղորդել. «Անհարմար չէ՞, միթե, որ մեծ ընդունակությունների տեր մարդը, հանդես գալով տնօրենների խորհրդի կամ համապատասխան կոմիտեի առջև, ի վիճակի չի լինում հասկանալի կերպով շարադրելու սեփական մտահղացումները»[4]:

Ճարտասանությունը գիտություն է և արվեստ, գիտելիք և հմտություն. այս երկմիասնությունը բնութագրական է հայ տեսական մտքի համար՝ սկսած «**Գիրք Պիտոյից**» ձեռնարկից (ճարտասանական վարժությունների ժողովածու է՝ մասամբ թարգմանական, մասամբ բնագիր հայերեն նյութերից կազմված[5], որ գործածվել է 5-րդ դարի վերջից մինչև 18-րդ դարը) և վերջացրած 19-րդ դարի նշանավոր հեղինակների հրապարակումներով[6]: Այս դիրքորոշումն է ավանդաբար բնորոշ եղել նաև միջնադարյան Հայաստանի կրթական հաստատությունների՝ Հաղպատի, Սանահինի, Գոշավանքի, Նարեկա, Մեծոփա, Խոր վիրապի, Այրիվանքի, Հաղարծնի, բազմաթիվ այլ դպրոցների, Գլաձորի և Տաթևի համալսարանների համար:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնը «Հռետորական արվեստ» առարկան դասավանդում է շուրջ 20 տարի: Այս ընթացքում քանիցս վերանայվել է առարկայի ծրագիրը՝ հաշվի առնելով կուտակված փորձը, հատկապես ուսանողների կարծիքները: Առավել կարևորը, թերևս, այն է, որ դասավանդման շնորհիվ ստեղծվեց և աստիճանաբար՝ հրատարակությունից հրատարակություն բարելավվեց «Ճարտասանություն» բուհական դասագիրքը[7]:

Առարկայի ծրագիրը ներառում է երեք հիմնական մաս՝ ճարտասանության պատմությունը, տեսության հարցեր (խոսքի մասեր, փաստարկման

---

[3] **Leith S.,** Words like loaded pistols: Rhetoric from Aristotle to Omaba. New York, “Basic Books”, 2012, p. 17.

[4] **Якокка Л.**, Карьера менеджера / Пер. с англ., М., “Прогресс”, 1991, с. 79.

[5] Տե՛ս Գիրք Պիտոյից: Աշխատասիր.՝ Գ. Մուրադյանի, պատ. խմբ.՝ Ս.Ս. Արևշատյան, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 1993:

[6] Տե՛ս **Ս. Գանթարեան,** Տարերք հռետորական արուեստի, Վենետիկ, 1875, **Մ. Գարագաշեան,** Արուեստ ճարտարախօսութեան, Վիէննա, 1844, **Մ. Սալլանթեանց,** Հրահանգ ճարտասանութեան կամ ճառաբանութեան, Մոսկով, 1836, **Էդ. Հիւրմիւզեան,** Առձեռն ճարտասանութիւն, Վենետիկ, 1856, **Ե. Մուրատեան,** Նոր ճաշակ դպրութեան կամ համառօտ ճարտասանութիւն, Յերուսաղէմ, 1868:

[7] Տե՛ս **Վ. Միրզոյան**, Ճարտասանություն / 6-րդ հրատ., Եր., «ՎՄՎ-ՊՐԻՆՏ», 2016:

եղանակներ, ոճական հնարքներ) և գործնական հարցեր (արտասանություն, հիշողություն, լեզվատրամաբանական սխալների վերլուծություն): Իհարկե, այս բաժանումը պայմանական է. սոփեստների, Դեմոսթենեսի, Ցիցերոնի, մյուս ճարտասանների ժառանգությունից մենք քաղում ենք նաև տեսական և գործնական բնույթի դասեր:

Հրապարակային խոսքին տիրապետելը, հստակ և համոզիչ խոսելը ենթադրում են ոչ միայն լեզվիմացություն, անհրաժեշտ գիտելիքների առկայություն, դրանք կապակցված, որոշակի տրամաբանական հենքով և հուզականորեն մատուցելու հմտություն, արտասանական կարողություն, այլև հոգեբանական պատրաստականություն, ամենից առաջ՝ խոսողի կաշկանդվածության հաղթահարում, ինքնատիրապետում, ունկնդիրների արձագանքը նրբորեն ընկալելու, խոսքային պատշաճ ոճ ընտրելու և հետադարձ կապն ապահովելու ունակություն: Իսկ ամենակարևորը, անտարակույս, դժվարությունները հաղթահարելու կամքը, ցանկությունն է: Ամեն մի սկսնակի հավատո հանգանակը պիտի լինի **Հակոբ Պարոնյանի** սեղմ, բայց տարողունակ ձևակերպումը. «Շատ լեզուներ սորվիլ մեկ երկու տարվան գործ է, իրենին մեջ պերճախոս ըլլալու համար ամբողջ կյանք մը պետք է»[8]:

Ուստի հարկավոր է սկսել սկզբից, իսկ որպես այդպիսին առավել հարմար է պատրաստի տեքստի հրապարակային **բարձրաձայն ընթերցումը**: Դասի ընթացքում ուսանողին առաջարկվում է ամբիոնից հնչեցնել գեղարվեստական և հրապարակախոսական գրականությունից ընտրված որոշակի տեքստ՝ հնարավորինս նույնական արտահայտելով հեղինակի միտքը: Դա անելը բնավ էլ դյուրին չէ (համոզվելու համար ընթերցողին առաջարկում ենք բարձրաձայն կարդալ որևէ տեքստ, ձայնագրել և ուշադիր լսել ձայնագրությունը): Ներկայումս մենք ավելի շատ մտքում ենք կարդում՝ հաճախ հապշտապ, սոսկ աչքերով սահելով բառերի վրայով: Իսկ ահա բարձրաձայն ընթերցելիս մենք դա անում ենք ոչ այնքան մեզ համար, որքան մեզ լսողների: Ընթերցողը միջնորդ է հնչեցվող տեքստի և ունկնդիրների միջև: Բայց քանի որ մենք ռոբոտ չենք, այսինքն՝ չենք կարող լիովին չեզոք լինել նյութի հանդեպ, ուստի ընթերցողը մասամբ նաև մեկնաբան է դառնում: Ահա թե ինչու միևնույն տեքստը լսարանում հաճախ տարբեր հնչեղություն է ստանում:

Շատ օգտակար է լինում, երբ որպես նյութ ընտրում ենք հատկապես հռետորական արվեստի տեսաբաններից համեմատաբար ամփոփ հատվածներ, ազդեցիկ և համոզիչ խոսքին վերաբերող նրանց խորհուրդները (այդ նպատակին է ծառայում դասագրքի «Ճարտասանության գործնական պատվիրաններ» շտեմարանը). այսկերպ ուսանողը, փաստորեն, դառնում է խորհրդատու, իսկ սա նշանակում է, որ նա ինքը նախ պիտի հասկանա գրվածը, ապա կարողանա դա հավաստի և համոզիչ մատուցել ունկնդիրներին: Այս նպատակադրումները հիմնականում իրենց արդարացնում են:

Միաժամանակ, փորձը ցույց տվեց, որ կան ուսանողներ, ովքեր խիստ դժվարանում են բավարարել տարրական պահանջները՝ փոքրիշատե երկար նախադասություններում կորցնում են տրամաբանական շեշտադրումը, ավելին՝ սայթաքում են մի շարք բառեր արտասանելիս, կակազում են, անհարկի միջարկություններ օգտագործում: Բացահայտվում են խնդիրներ, որոնք պիտի լուծված լինեին միջնակարգ դպրոցում: Համենայնդեպս, ակն-

[8] **Հ. Պարոնյան**, Քաղվածք // Պարոնյան Հ., Երկերի ժողովածու տասը հատորով, հատ. 7, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 362:

հայտ է, որ բանավոր խոսքի մշակույթն առանձնապես հարգի չէ այս համակարգում, ոչ էլ պարտադիր պայման է՝ ընդունվելու բարձրագույն ուսումնական հաստատություն:

Մենք դեռ սոսկ արձանագրում ենք պատրաստի տեքստն ընթերցելու պատրաստվածության ցածր աստիճանը, իսկ ինքնուրույն կապակցված խոսք կազմելու հմտությունները, առանց չափազանցության, ողբալի մակարդակում են: Հաճախ, ցավալիորեն հաճախ ենք հարկադրված լինում հիշելու **Հակոբ Պարոնյանի** սպանիչ հարցը. «Խոսքն արդարև բառերե կը կազմի, բայց չեմ գիտեր, թե բառերն քովե քով դրվելով անպատճառ խոսք մը գոյացնելու արտոնություն ունի՞ն»[9]: Եթե որևէ ընթերցողի խիստ է թվում ասվածը, ապա առաջարկում ենք՝ հանձնարարեք ուսանողին որևէ բանի մասին ամբիոնից հինգ րոպե խոսել և իսկույն կհամոզվեք, թե ինչ արհավիրքի են հանգեցրել թեստերով ուսուցումը, թեստերի միջոցով լեզվիմացությունը և առհասարակ գրագիտությունը ստուգելը, սրան հավելյալ՝ էլեկտրոնային գրագրության տարածումը, սոցիալական ցանցերի գործառության հետևանքով կենդանի խոսքային հաղորդակցման պակասը, հեռուստասերիալների առավելապես ցածրաճաշակ խոսակցությունները և այլն:

Արտասանական բնույթի խնդիրների լուծմանն են կոչված տարբեր շուտասելուկները, առածներն ու ասացվածքները, բառախաղերը, նախօրոք հանձնարարված և հանպատրաստից ճառերը և դրանց քննարկումը, ասմունքը, նաև շնչառական հատուկ վարժությունները: Հարկավոր է նշել, որ, ի տարբերություն ընթերցանության, ասմունքի հարցում առաջին կուրսեցիները հիմնականում լավ մակարդակ են դրսևորում. Թումանյան, Տերյան, Չարենց, Սևակ լավ գիտեն (թեպետ առավելապես դպրոցական ծրագրի շրջանակներում):

Իհարկե, ճարտասանություն ուսուցանելիս ասմունքը միջոց է, ոչ թե նպատակ: Այս տարբերակումը կարևոր է լավ հասկանալ և հասկացնել սովորողներին, քանի որ կա մի տարածված թյուր կարծրատիպ, ըստ որի ճարտասանական խոսքը նույնացվում է փքուն, ճոռոմ խոսքի, ճամարտակության հետ: Մինչդեռ, ճարտասանի խոսքը ինքնին կարող է հիացնել ունկնդիրներին հնչեցման տեխնիկայով, հուզականությամբ, պաթոսով, խոսողի առինքնող ձայնով, ազդեցիկ շարժումներով, տպավորիչ դիմախաղով, սակայն էականն այն է, որ ճարտասանի նպատակը համոզելն է, ոչ թե հիացնելը: Դեռ ավելին, եթե հրապարակային ելույթից հետո հիշվում է ոչ թե այն, ինչ ասել է ճարտասանը (իսկ կառավարչի խոսքի պարագայում՝ հատկապես ինչի է մղել, ուղղորդել ունկնդիր ենթականերին), այլ՝ ինչպես է ասել (որքան հարուստ բառապաշար ունի, որքան լավ է հնչեցնում խոսքը և այլն), սա նշանակում է, որ ճարտասանական խոսքը չի հասել իր բուն նպատակին՝ համոզելուն:

Խոսքի բովանդակության և ձևի ներդաշնակության առումով տեղին է հիշեցնել ճարտասանության հին հռոմեացի նշանավոր ուսուցիչ **Մարկոս Քվինտիլիանոսի** ձևակերպումը՝ պատկերավորության, հուզարտահայտչականության տեսակետից ճարտասանի խոսքը միջին տեղ է գրավում առտնին խոսքի և ասմունքի միջև, այսինքն՝ չպետք է լինի սովորական խոսակցության պես՝ «հասարակ», բայց և չպետք է լինի չափազանց ճոխ, ոճական հնարքնե-

[9] **Հ. Պարոնյան**, Երկու բառագիրներու վեճն հասարակաց կարծյաց կշռույն մեջ // Պարոնյան Հ., Երկերի ժողովածու տասը հատորով, հատ. 10, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, էջ 285:

րով գերհագեցած: Այս «ոսկի միջինի» ապահովումը իրական հաղորդակցման մեջ պայմանավորված է մի շարք գործոններով՝ թեմայով, խոսողի նպատակադրմամբ, ունկնդիրների տրամադրվածությամբ և պատրաստվածությամբ, նաև ճարտասանի հանդեպ վերաբերմունքով:

«Պաթոս – լոգոս – էթոս»՝ ճարտասանական խոսքի համոզկերությունն ապահովող արիստոտելյան այս եռանդամ բանաձևը խոսողից պահանջում է ամենից առաջ հաշվի առնել լսարանի առանձնահատկությունները (էթոսը), ըստ վերջիններիս էլ ընտրել խոսքային ազդեցության համապատասխան միջոցները (լոգոսը՝ բառային կազմը, փաստարկման եղանակները, հուզականության չափը, ճարտասանական հնարքները, տարբեր օրինակներ, վկայակոչումներ)՝ ասելիքը (պաթոսը) պատշաճ մատուցելու համար: Ինքնին ամենահարուստ, բովանդակալից, տրամաբանված լոգոսը չի կարող ապահովել ճարտասանի ելույթի հաջողությունը, եթե չի համապատասխանում էթոս-ին: Վերջինիս առանձնահատկություններն անակնկալի չեն բերում այն ճարտասանին, որը տեղյակ է տրամաբանական մտածողության օրենքներին, փաստարկման և հակափաստարկման տեխնիկային, հմտորեն է գործադրում ճարտասանական հնարքները: Ուսանողներն ասվածի մեջ համոզվում են ինչպես դասագրքի օրինակներով, այնպես էլ սեփական ելույթների համատեղ վերլուծությամբ:

Ամեն մի դասի ընթացքում մեծ տեղ է հատկացվում **բառիմացությանը**: «Ճիշտ բառը՝ ճիշտ տեղում» սկզբունքը պահպանելու համար խոսողը պետք է ունենա հարուստ բառապաշար՝ սեփական մտքի լեզվական ձևակերպման նպատակով ամենաստույգ բառը և բառակապակցությունը գործածելու համար: Սա խոսելու կարողության տարրական պահանջն է, առանց որի առօրյա հաղորդակցումն իսկ բարդանում է, իսկ այլոց որոշակի մտքեր հաղորդելը և մանավանդ՝ համոզելը, անհնարին են: Բառերի իմացությունը և դրանք տեղին գործածելու կարողությունը **Ցիցերոնը** ուղղակի անվանում է «պերճախոսության հիմքն ու հենքը»[10]:

Կա ևս մեկ հանգամանք, որ հույժ կարևորում է բառապաշարի դերը: Սա վերաբերում է «ՅՀ»-ի օրենքին, ըստ որի խոսքը պետք է լինի *հստակ, հակիրճ* և *հավաստի:* Խոսքային հաղորդակցման որոշ իրավիճակներում անխուսափելի է լինում հատկապես հակիրճության պահանջի խախտումը: Դիցուք՝ կառավարիչը ենթակային ինչ-որ բան է հանձնարարում, բայց և զգում է, որ դիմացինը լավ չի ըմբռնել ասվածը, հետևաբար՝ բացառված չէ նաև հանձնարարության թերի կատարումը կամ էլ լիովին ձախողումը: Հարկավոր է, ուրեմն, կրկնել ասվածը, սակայն հետևելով այն կանոնին, որ միևնույն միտքը չի կարելի նույն բառերով, նույն ձևակերպումներով արտահայտել, քանի ու ենթակայի մեջ կատարվում է արգելակում. նա արդեն լսել է ասվածը («դեժավյու»), ուստի դարձյալ չի ընկալում, չի էլ լսում: Մինչդեռ, այլ բառերով և ձևակերպումներով՝ կառավարիչը հնարավորություն է ստանում ավելի հստակ և հասկանալի դարձնելու հանձնարարությունը: Եվ որքան հարուստ է խոսողի բառապաշարը, այնքան ավելի ճկուն է փոխարինում հոմանիշները, գտնում ավելի թարմ, տպավորիչ արտահայտություններ:

Ճոխաբանության բաժինը ներառում է նաև **լեզվական սխալների վերլուծությունը՝** արտասանական, շարահյուսական, ոճական և տրամաբանական

---

[10] Տե՛ս **Цицерон**, Об ораторе // Марк Туллий Цицерон, Три трактата об ораторском искусстве. М., “Наука”, 1972, էջ 235:

բնույթի: Ուսանողները բազմաթիվ օրինակներով համոզվում են, թե մեկ հատիկ բառի սխալ հնչեցումն իսկ ինչպես կարող է աղավաղել խոսողի միտքը, թե որքան հաճախ և որքան անփութորեն ենք կատարում կրկնաբանության սխալներ, ստեղծում ոճական անհարթություններ, խախտում խոսքի կառուցման՝ հայերենին բնորոշ լեզվական օրինաչափությունները:

«Ճիշտ բառը՝ ճիշտ տեղում» սկզբունքի պահպանումը ոչ միայն ճարտասանի խոսքային բարձր մշակույթի վկայությունն է, այլև ունկնդիրների հանդեպ հարգալից վերաբերմունքի, հրապարակային խոսքի նշանակության ըմբռնման ապացույց: Վստահաբար կարող ենք ասել, որ «Հռետորական արվեստ» առարկայի շնորհիվ ուսանողներն առավել պատասխանատու են դառնում սեփական և ուրիշների խոսքի հանդեպ: Մասնավորապես՝ համեմատաբար քիչ են օգտագործվում անհարկի օտարաբանություններ, ավելի հարստանում է տնտեսագիտական եզրերի հայերեն համարժեքների պաշարը, գրեթե վերանում է պորտաբույծ բառերի և միջարկությունների գործածությունը: Դասախոսություններն ու սեմինարները, ընթացիկ և ամփոփիչ ստուգումները, մանավանդ՝ «Պարույր Հայկազն» ավանդական մրցույթը հիմք տալիս են նման եզրակացության:

Ուսանողների **ելույթները,** որպես կանոն, մեծ աշխուժություն են առաջացնում լսարանում: Թեմաներն այնպես են ընտրվում, որ հետաքրքրում, կարելի է ասել՝ հուզում են շատերին. բազում հարցեր են առաջացնում, երբեմն՝ թեժ վիճաբանություն. «Ես երբեք չեմ ուշանում», «Կառավարիչն իմ պատկերացմամբ», «Մահացու հիվանդն ունի՞ արդյոք կյանքից ինքնակամ հեռանալու իրավունք», «Բարի նախանձ չի լինում», «Ճի՞շտ է արդյոք մահապատժի վերացումը», «Ես երբեք սուտ չեմ խոսել» և այլն: Այս և նման թեմաների վերաբերյալ միջնակարգ կրթությամբ ամեն ոք ինչ-որ ասելիք ունի, մեր խնդիրն է զարգացնել գիտելիքը մատուցելու հմտությունը: Հարկավոր է նկատել, որ ուսանողին առաջին ելույթի հրավիրելը նրբանկատություն է պահանջում. մի կողմից՝ պահանջկոտություն է հարկավոր դրսևորել, քանի որ պետք է լինում հաղթահարել հրապարակային խոսքից վախը, մյուս կողմից՝ շատ պնդելը, պարտադրանքը կարող են էլ ավելի բարդացնել վիճակը, խորացնել վախը: Փոխարենը՝ ամաչկոտ ուսանողին հնարավորություն ընձեռելով լսելու մյուսների ելույթները և աստիճանաբար ներքաշվելու քննարկումների մեջ՝ մենք կարող ենք հաղթահարել նրա կաշկանդվածությունը և ընտելացնել ամբիոնին: Ելույթների կատարելագործմանը նպաստում է նաև խոսքի պլանը՝ գրավոր տեքստը, երբ ուսանողը փորձում է իր ասելիքը զետեղել մեկ էջում՝ տրամաբանական հերթականությամբ, առավելագույնս սեղմ ձևակերպումներով:

2016–2017 ուսումնական տարվա ընթացքում «Հռետորական արվեստ» առարկան ընդգրկել է կառավարման ֆակուլտետի բոլոր առաջին կուրսեցիներին: Նախորդ տարիների համեմատությամբ սովորողների ծավալի շեշտակի աճը առավել կարևոր դարձրեց հռետորական արվեստի հիմնադրույթների ընկալմանը, ուսանողների հմտությունների ձևավորմանը վերաբերող մեթոդաբանական բնույթի խնդիրների բացահայտումը, որի նպատակով էլ ամփոփիչ ստուգման ժամանակ (2017 թ. հունվար) անցկացվեց ընդգրկուն **սոցիոլոգիական հարցում:** Պատրաստված էր ոչ մեծ ծավալի հարցաթերթիկ, որը ուսանողը լրացնում էր անանուն, քննությունը հանձնելուց և գնահատականը ստանալուց հետո, զուտ կամավորության սկզբունքով: Քննությանը մասնակցած 198 ուսանողից հարցաթերթիկ լրացրել են 125-ը:

Առաջին՝ «Հռետորական արվեստին ծանոթանալը Ձեզ համար օգտակա՞ր եղավ» հարցին դրական է պատասխանել ուսանողների 100 տոկոսը: Որպես պատասխանի հիմնավորում առաջարկված էին հնարավոր ձևակերպումներ՝ «սովորեցի հռետորական արվեստի հիմունքները» և «ձեռք բերեցի հրապարակային խոսքի որոշակի հմտություններ»: Այս ձևակերպումները, ըստ մտահղացման, համապատասխանում են «Հռետորական արվեստ» առարկայի երեք բաղադրիչներին՝ պատմությանը, տեսությանը և փորձառությանը: Ստացվել է հետևյալ պատկերը (կարելի էր ընտրել մի քանի պատասխան).

1. «ծանոթացա հռետորական արվեստի պատմությանը»՝ 48 պատասխան կամ ընդհանուր պատասխանների 23%-ը,
2. «սովորեցի հռետորական արվեստի հիմունքները»՝ 51 պատասխան (24,5%),
3. «ձեռք բերեցի հրապարակային խոսքի որոշակի հմտություններ»՝ 109 պատասխան (52,5%):

Ակնհայտ է, որ ուսանողները տվյալ առարկայի բուհական ուսուցման դերը ընկալել են հենց այնպես, ինչպես որ նախատեսված է եղել: Անտարակույս, կարևոր է թե՛ հռետորական արվեստի պատմության՝ որպես մշակույթի բաղադրիչի, թե՛ խոսքի կազմակերպման տեսական և մեթոդական հարցերի իմացությունը, սակայն մեր նպատակը ապագա կառավարիչների հրապարակային համոզիչ խոսքի հմտությունների ձևավորումն է:

Տվյալ հարցին առնչվող «այլ պատասխան» շատ քչերն են լրացրել: Սա միանգամայն բնական է, քանի որ հարցվողներն առաջին կուրսեցիներ են և, ամենայն հավանականությամբ, առիթ չեն ունեցել ինքնուրույն պատասխանելու հարցաթերթիկի (միայն երկրորդ կուրսում են ուսումնասիրելու «Սոցիոլոգիա»): Ահա թե ինչու մենք խնդիր էլ չէինք դրել բաց հարցերի հետագա կոդավորման, գերադասելի էր այն մոտեցումը, երբ առանձնացվում են «առավել վառ ու ինքնատիպ պատասխանները»՝ որպես տվյալ հարցի հանդեպ խտացված խոսք[11]: Դրանցից են՝

- «սովորեցի ավելի ճիշտ ու գեղեցիկ խոսել»,
- «իմ ձեռք բերած գիտելիքները ես կօգտագործեմ ավելի ազդեցիկ խոսք ունենալու համար»,
- «սկսեցի ավելի կարևորել խոսքը»,
- «սկսեցի չվախենալ ամբիոնից»,
- «ինքս իմ մեջ կարողացա բացահայտել ճարտասանական հնարավորություններ»,
- «հմտացա միտքս ավելի ճշգրիտ արտահայտելու մեջ»:

Կարևոր էր պարզել նաև ուսանողների վերաբերմունքը **քննության ձևին** վերաբերող հարցին: Տարիներ շարունակ «Հռետորական արվեստ» առարկայի թե՛ ընթացիկ ստուգումը (ունեցանք նաև երկու միջանկյալ քննության փորձառություն), թե՛ ամփոփիչը անցկացվում էին միայն գրավոր: Քննության այս ձևի բացահայտ անմտությունը յուրատեսակ ծաղր էր տվյալ առարկայի ուսուցման հանդեպ: Բարեբախտաբար, այս տարի միայն ընթացիկ ստուգումը գրավոր անցկացվեց, բայց և չկա վստահություն, որ հաջորդ տարի հեր-

[11] Տե՛ս **Գ. Պողոսյան,** Ինֆորմացիայի հավաքման մեթոդները սոցիոլոգիայում, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 50:

թական «բարեփոխումը» փորձանք չի բերի: Տեսնենք, թե ի՞նչ կարծիքի են ուսանողները քննության ցանկալի ձևի մասին.

1. գրավոր՝ 6 հոգի կամ 4,8%-ը,
2. բանավոր՝ 118 հոգի կամ 95,2%-ը:

Ինչպես ասում են՝ մեկնաբանություններն ավելորդ են:

Հաջորդ հարցը ձևակերպված էր այսպես. «Բավարա՞ր էր արդյոք մեկ կիսամյակը, թե՞ ցանկալի կլիներ շարունակել»: Պատասխաններից ստացվում է հետևյալ պատկերը՝

1. բավարար էր՝ 4 հոգի կամ 3,3%-ը,
2. ցանկալի կլիներ շարունակել՝ 118 հոգի կամ 96,7%-ը:

Վերստին ավելի քան պարզ է ուսանողության կարծիքը: Կան որոշ ուշագրավ հիմնավորումներ և առաջարկություններ (տրված բաց հարցերին)՝ հոգուտ ուսուցման շարունակության: Առանձնացնենք մի քանիսը՝

- «առաջարկում եմ, որ այս առարկան բավական երկար անցնենք, քանի որ միշտ սովորելու բան ունենք, որը կօգտագործվի կյանքում»,
- «լավ կլինի շարունակենք առարկան, քանի որ մենք սովորում ենք կառավարման ֆակուլտետում. դա հետագայում կնպաստի բանավոր խոսքի զարգացմանը»,
- «ավելի շատ դասաժամեր հատկացնել այս առարկային»,
- «կառաջարկեի, որ մյուս ֆակուլտետներում էլ անցնեն այս առարկան»,
- «խորհուրդ կտայի առարկան ավելի երկար ժամանակով ուսուցանվեր, քանի որ մեկ կիսամյակը, իսկապես, քիչ է»,
- «կցանկանայի, որ ավելի շատ մրցույթներ և նման միջոցառումներ անցկացվեն»,
- «կցանկանայի, որ այս առարկան ուսումնասիրեին ՀՊՏՀ բոլոր ուսանողները»,
- «ցանկալի կլիներ ավելի փոքր խմբերով անցկացնել դասերը»,
- «կցանկանայի նմանատիպ առարկաները շատ լինեին»,
- «հնարավորության դեպքում ստեղծել խմբակ՝ հռետորական արվեստի սիրահարների համար»:

Իհարկե, պատասխանները, ընդհանուր առմամբ, համապատասխանում են հռետորական արվեստի բազմամյա փորձից քաղած մեր սեփական եզրակացություններին: Նախկինում նույնպես ուսանողները մշտապես ցանկություն են ունեցել առարկայի դասավանդումը շարունակելու, թեպետ, ինքնին հասկանալի է, որ տնտեսագիտական բուհում դասաժամերը չեն կարող ավելի «բարեհոգի» գտնվել հռետորական արվեստի հանդեպ (պատահական չէ, որ այս առարկան նախկինում ուսումնասիրում էին նաև շուկայաբանության մասնագիտության սովորողները, սակայն աստիճանաբար դուրս մղվեց): Հավանաբար՝ հռետորական խմբակի գործունեությունը մասամբ կարող է նպաստել գործին: Ուշագրավ են նաև մյուս առաջարկները:

Բայց կարևորն այն է, որ ամեն հասուն անհատի մեջ ձևավորվի պատրաստակամություն՝ ինքնուրույն շարունակելու ճարտասանական հմտությունների կատարելագործումը: Հետազոտության ընդհանուր պատկերը, համենայնդեպս, հիմք է տալիս հավատալու, որ մեր ուսանողները հենց այդպես էլ վարվելու են: Իսկ դա նշանակում է, որ գրագետ խոսքի ճաշակ, սեփական և այլոց խոսքի հանդեպ ավելի պատասխանատու վերաբերմունք ունեցող-

ների թիվը մեր հասարակության մեջ որոշ չափով աճելու է: Եվ, միգուցե, տարիներ հետո մեր ուսանողների մեջ կգտնվեն պետական-հասարակական երևելի գործիչներ, հաջողակ գործարարներ, նշանավոր գիտնականներ, քաջահմուտ ղեկավարներ, որ իրենց հաջողությունների հիմքը կտեսնեն նաև այն բանում, որ ՀՊՏՀ-ում ուսանելիս անցել են «Հռետորական արվեստ» առարկան:

Օգտագործված գրականություն

1. Անհաղթ Դ., Փիլիսոփայության սահմանումները // Անհաղթ Դ., Երկիր, Եր., «Սովետ. գրող», 1980:
2. Գանթարեան Ս., Տարերք հռետորական արուեստի, Վենետիկ, 1875:
3. Գարագաշեան Մ., Արուեստ ճարտարախօսութեան, Վիէննա, 1844:
4. «Գիրք Պիտոյից»: Աշխատասիր.՝ Գ. Մուրադյանի, պատ. խմբ.՝ Ս.Ս. Արևշատյան, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 1993:
5. Հիւրմիւզեան էդ., Առձեռն ճարտասանութիւն, Վենետիկ, 1856:
6. Միրզոյան Վ., Ճարտասանություն, 6-րդ հրատ., Եր., «ԿՄԿ-ՊՐԻՆՏ», 2016:
7. Մուրատեան Ե., Նոր ճաշակ դպրութեան կամ համառօտ ճարտասանութիւն, Յերուսաղէմ, 1868:
8. Սալլանթեանց Մ., Հրահանգ ճարտասանութեան կամ ճառաբանութեան, Մոսկով, 1836:
9. Պարոնյան Հ., Երկու բառագիրներու վեճն հասարակաց կարծյաց կշռույն մեջ // Պարոնյան Հ., Երկերի ժողովածու տասը հատորով, հատ. 10, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979:
10. Պարոնյան Հ., Քաղվածք // Պարոնյան Հ., Երկերի ժողովածու տասը հատորով, հատ. 7, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969:
11. Պողոսյան Գ.Ա., Ինֆորմացիայի հավաքման մեթոդները սոցիոլոգիայում, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987:
12. Аннушкин В.И., Риторика. Вводный курс: учебное пособие. М., “Наука”, 2007.
13. Введенская Л.А., Павлова Л.Г., Культура и искусство речи. Ростов-на-Дону, “Феникс”, 1998.
14. Зарецкая Е.Н., Риторика: Теория и практика речевой коммуникации. М., “Дело”, 1998.
15. Клюев Е.В., Риторика. Учебное пособие для вузов. М., “ПРИОР”, 2001.
16. Культура русской речи. Учебник для вузов. М., “НОРМА – ИНФРА–М”, 1998.
17. Лиммерман Х., Учебник риторики / Пер. с немец., М., “Интерэксперт”, 1998.
18. Риторика и культура речи в современном обществе и образовании. Сборник материалов X международной конференции по риторике. М., “Наука”, 2006.
19. Рожденственский Ю.В., Теория риторики. М., “Добросвет”, 1997.
20. Сопер П., Основы искусства речи / Пер. с англ., Ростов-на- Дону, “Феникс”, 1996.
21. Цицерон, Об ораторе // Марк Туллий Цицерон, Три трактата об ораторском искусстве. М., “Наука”, 1972.
22. Якокка Л., Карьера менеджера / Пер. с англ. М., “Прогресс”, 1991.
23. Leith S., Words like loaded pistols: Rhetoric from Aristotle to Omaba. New York, “Basic Books”, 2012.

ВАЛЕРИЙ МИРЗОЯН
Профессор кафедры Менеджмента АГЭУ,
доктор философских наук

Вопросы вузовского преподавания ораторского искусства.– В статье обсуждаются некоторые вопросы вузовского преподавания ораторского искусства. Анализ основан на теоретических концепциях ораторского искусства (риторики), классических и современных исследованиях относительно истории, основных проблем и специфике преподавания данной дисциплины, на учебных и методических пособиях, на многолетнем преподавательском опыте автора, а также на результатах социологического опроса среди студентов АГЭУ. Заключения направлены не только на поднятие общего уровня профессиональной подготовки экономистов-менеджеров, в частности, через совершенствование их коммуникативных навыков, но и на всеобщее повышение престижа публичной речи посредством широкой общественной деятельности будущих выпускников вуза.

Ключевые слова: *ораторское искусство, преподавание, публичная речь, коммуникативные навыки, социологический опрос.*
JEL: Y8, Z1, Z10

VALERI MIRZOYAN
Professor at the Chair of Management at ASUE,
Doctor of Science (in Philosophy)

Questions of Rhetorical Art in University Teaching.– Some questions of rhetorical art university teaching are considered in the given paper. The analysis is based on some theoretical concepts of rhetoric, classical and contemporary publications, textbooks and manuals, methodical instructions relating to the history, problems and teaching feature of this discipline, the author's long standing experience, and also surveys conducted among the ASUE students. The conclusions are aimed not only at strengthening the overall professionalism of the economist-managers, in particular, at improving their communication skills, but also improving the image of public speaking thanks to a wide range of public activities of the future graduates.

Key words: *rhetorical art, teaching, public speaking, communication skills, poll.*
JEL: Y8, Z1, Z10